

Երևան

«25» մարտի, 2025թ.

Yerevan

March "25", 2025

«Մեզոն Մարոմ» ՍՊ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրենի տեղակալ Իգոր Սերիկովի, որը գործում է 10.02.2025թ. տրված լիազորագրի ըն հիման վրա, մի կողմից, և

“Maison Marom” LL company, hereinafter referred to as the “Client”, represented by Deputy Director Igor Serikov, acting based with the power of attorney dated 10.02.2025, on one side, and

«Քաղաքի ամսագիր» ՍՊ ընկերությունը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Արտավազ Եղիազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

“Kaghaki Amsagir” LL company, hereinafter referred to as “Executor”, on behalf of the Director Artavazd Yeghiazaryan, acting in compliance with the Charter of the Company, on the other side,

Պատվիրատուի և Կատարողի միասին հիշատակման դեպքում այսուհետ՝ «Կողմեր», իսկ առանձին՝ նաև՝ «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին:

Client and Executor hereinafter jointly referred to as the “Parties” and separately as “Party”, have concluded the present contract, hereinafter referred to as the “Contract” on the following.

1. Պայմանագրի առարկան

Subject of the Contract

- 1.1. Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրի համաձայն մայիս ամսին թողարկվող ԵՐԵՎԱՆ ամսագրի (այսուհետ՝ «Ամսագիր») թվով 2 (երկու) էջերում ինտեգրել Պատվիրատուի գործունեության մասին Պատվիրատուի կողմից հաստատված Նյութը (այսուհետ՝ «Նյութ»), ինչպես նաև Պատվիրատուի կողմից հաստատված բրենդային ինքնակաշունչների հավաքածուն և Պատվիրատուին տրամադրել ամսագրի թվով 50 (հիսուն) օրինակ, այսուհետ՝ «Ծառայություններ», իսկ Պատվիրատուն պարտավորվում է մատուցված Ծառայությունների համար վճարել Կատարողին սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:
- 1.2. Կատարողը պարտավորվում է Նյութը նախապես ուղարկել Պատվիրատուի գրավոր հաստատմանը:
- 1.3. Կատարողը պարտավոր է Ծառայությունները մատուցել Պայմանագրի ստորագրման պահից և Ծառայությունների արդյունքը հանձնել Պատվիրատուին մինչև 2025 թվականի մայիսի 25-ը:

The Executor undertakes in accordance with this Contract to integrate the material about the Customer, approved by the Customer (hereinafter “Material”) on 2 (two) pages of the Yerevan magazine to be published in May (hereinafter “Magazine”), a branded sticker set approved by the Customer, and to handover to the Client 50 (fifty) copies of the Magazine, hereinafter referred to as “Services”, and the Client undertakes to pay to the Executor for the Services provided within the timeframe and manner defined in the Agreement.

The Executor undertakes to send the Material in advance to the written approval of the Client.

The Executor is obliged to provide the Services from the moment of bilateral signature of the Contract and to deliver the Services result to the Client until May 25th, 2025.

2. Ծառայությունների մատուցման և դրա հանձնման-ընդունման կարգը

General terms of provision of Services and its handing-acceptance

- 2.1. Կատարողը Ծառայությունները մատուցում է իր միջոցներով և սարքավորումներով:
- 2.2. Ծառայությունները մատուցելուց հետո Կատարողը Պատվիրատուին է փոխանցում համապատասխան հաշիվ-ապրանքագիրը (այսուհետ՝ «Ակտ»):
- 2.3. Կատարողի կողմից ուղարկված Ակտը, կամ դրա պատճառաբանված մերժումը, ստորագրվում է Պատվիրատուի կողմից և ուղարկվում առաջինիս դրա ստացումից հետո 5 (հինգ) աշխատանքային

The Executor undertakes to provide the Services by his own means and equipment.

After provision of the Services, the Executor will send to the Client the invoice of the Provided Services (hereinafter referred to as the “Act”).

The Act sent by the Executor, or a reasonable refusal to sign it, will be signed by the Client and sent to the former within 5 (five) business days from the date of its receipt. In case of refusal, the Parties will sign an

օրվա ընթացքում: Մերժման դեպքում, Կողմերը ստորագրում են լրացուցիչ համաձայնագիր, որը ներառում է թերությունների ցանկը և դրանց վերացման ժամկետները, և որը ստորագրման պահից դառնում է սույն Պայմանագրի անբաժանելի մաս:

additional agreement, which, indicating the list of shortcomings and the timeframe of their elimination and, becomes an integral part of this Contract from the moment of its signing.

2.4. Պատվիրատուի կողմից հաստատված Ակտը հանդիսանում է կատարված ծառայությունների հանձնում-ընդունում:

The approved Act by the Client considered as handing-acceptance of the Services provided.

2.5. Ծառայության հանձնում-ընդունումից հետո կամ Պայմանագրի լուծման դեպքում Կատարողը պարտավորվում է ոչնչացնել մատուցված ծառայությունների բոլոր այն արդյունքները, որոնք չեն հանձնվել Պատվիրատուին, սակայն պարունակում են Պատվիրատուի մտավոր սեփականության տարրեր, ինչպես նաև ոչնչացնել կամ վերադարձնել Պատվիրատուից ստացված նախնական տեղեկատվությունները (մոդելները, կոնցեպտները, նմուշները, տեքստերը, տեսահոլովակները), բայց ամեն դեպքում, չօգտագործել դրանք որևէ կերպ և չփոխանցել որևէ երրորդ անձանց:

After the conduct of the handing-acceptance or in case of termination of this Contract to destroy all those results of the Services provided that were not handed to the Client, containing elements of the Client's intellectual property; as well as to destroy or return to the Client the initial information received (models, concepts, samples, texts, video spots) but in any case, not to use it in any ways and not to transfer it to any third parties.

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

Contract price and payment procedure

3.1. Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա ծառայությունների գինը կազմում է 1 650 000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը (այսուհետ՝ «Պայմանագրի գին»):

The price of the Services to be paid by the Client to the Executor is 1 650 000 (one million six hundred fifty thousand) AMD, including taxes (hereinafter referred to as the "Contract price").

3.2. Պատվիրատուն Պայմանագրի գնի 50 տոկոսը վճարում է Կատարողին աշխատանքները սկսելու պահին, 50 տոկոսը՝ ծառայությունները մատուցելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագրի հիման վրա:

The Client shall pay the 50 percent of the Contract price to the Executor when the development of the magazine starts, and 50 percent within 10 (ten) working days after provision of Services to the Client upon bilaterally Confirmed invoice.

3.3. Պատվիրատուն Պայմանագրի գինը վճարում է Կատարողին անկանխիկ՝ բանկային փոխանցման միջոցով:

The Contract price payment shall be made by the Client through bank transfer.

3.4. Պայմանագրի գինը, վերջնական է և ենթակա չէ փոփոխման առանց երկու Կողմերի գրավոր համաձայնության: Պատվիրատուն չի կրում հնարավոր լրացուցիչ ծախսերի փոխհատուցման/վճարման որևէ ռիսկ, այդ թվում հարկային, որևէ երրորդ կողմի առաջ, եթե այդպիսիք կծագեն Կատարողի համար:

The Contract price under this Contract, is final and cannot be changed without the written consent of both Parties. The Client will not bear any risks of reimbursement of possible additional expenses, including tax expenses, towards any third parties, if any will arise for the Executor.

4. Հեղինակային իրավունք

Copyright

4.1. Ակտի հաստատման պահից՝ Պատվիրատուին փոխանցվում են (զիջվում են) ծառայությունների Արդյունքի (այդ թվում՝ բոլոր նյութերի ձևավորման, տեքստային նյութերի, լուսանկարների, լուսանկարչական նյութերի/ նկարազարդումների, պրեզենտացիաների տեսանյութերի և մատուցված

Upon the signing of the Act the Client will receive (be assigned) all exclusive proprietary copyrights of the Services Results (including designs of all materials, texts, photos, photographic material / illustrations, presentations, videos as well as any other material created during Service provision), if any. Moreover,

Ճառայության ընթացքում ստեղծված ցանկացած այլ նյութերի) բոլոր բացառիկ գույքային հեղինակային իրավունքները, եթե այդպիսիք կլինեն: Ընդ որում, սեփականության հեղինակային իրավունքները փոխանցվում են Պատվիրատուին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամբողջ ծավալով, առանց որևէ միջոցային, տարածքային և ժամկետային սահմանափակումների, իսկ դրանց փոխանցման համար նախատեսված վճարը ներառված է Պայմանագրի գնի մեջ:

proprietary copyrights are transferred to the Client in full scale under the legislation of the Republic of Armenia without any financial, territorial and term limitations, while the payment envisaged for their transfer is included in the Contract price.

4.2. Պատվիրատուին բացառիկ սեփականության հեղինակային իրավունքների փոխանցման (զիջման) ուժով, վերջինս դառնում է միակ անձը, ով իրավունք ունի օգտագործել համապատասխան Ճառայությունների արդյունքները, իր հայեցողությամբ, օրենսդրությանը չհակասող ցանկացած կերպ, ինչպես նաև իրավունք ունի սույն իրավունքները լրիվ կամ մասնակի փոխանցել (զիջել) երրորդ անձանց:

Due to the transfer (assignment) of exclusive proprietary copyright to the Client, the latter will become the only person entitled to use the corresponding Services results at its discretion in any way that does not contradict to the law, with the right of full or partial transfer (assignment) of such rights to third parties.

4.3. Կատարողը երաշխավորում է, որ Պատվիրատուին փոխանցվող Պայմանագրով Ճառայությունների Արդյունքը ծանրաբեռնված չէ երրորդ անձանց պահանջներով և իրավունքներով կամ Պատվիրատուին ունի անհրաժեշտ թույլտվությունները, իրավատերերի հետ համապատասխան համաձայնագրերը, և պարտավորվում է երրորդ անձանց կողմից պահանջների ներկայացման դեպքում իր անունից և իր հաշվին լուծել վերը նշված իրավունքներին վերաբերող բոլոր վիճելի հարցերը:

The Executor guarantees that Services Result under the Contract are not burdened with requirements and rights of any third parties, or the Executor has the necessary permits, relevant agreements with the rights holders, and undertakes to resolve on its own behalf and at its own expense all disputes regarding the above-mentioned rights, in case of claims by third parties.

5. **Պատվիրատուի մտավոր սեփականության իրավունքների պաշտպանություն**

Protection of intellectual property rights

5.1. Կատարողը պարտավորվում է զերծ մնալ Պատվիրատուի ապրանքանիշների և/կամ բացառիկ սեփականության իրավունք հանդիսացող առարկաների օգտագործումից (և/կամ որևէ այլ գործունեության ձևից)՝ առանց վերջինիս նախնական գրավոր հանձնարարության ձեռքբերման՝ բացառությամբ այնպիսի օգտագործումից, որը Կատարողը իրականացնում է սույն Պայմանագրին համաձայն կարգով դրա ժամկետների և պայմանների շրջանակներում:

The Executor undertakes to abstain completely from any use (and / or any other activity) of the trademarks and / or objects of the exclusive property rights of the Client without the prior written consent of the latter, with the exception of the use the Executor will carry out, according to the terms of this Contract within its terms and conditions.

5.2. Կատարողը պարտավորվում է՝

The Executor undertakes to:

5.2.1. չխախտել Պատվիրատուի մտավոր սեփականության իրավունքները;

does not infringe any intellectual property rights of the Client;

5.2.2. երբեք չփորձել գրանցման հայտ ներկայացնել և/կամ գրանցել նման իրավունքների առարկաները;

never try to apply for registration and/or register the object of such rights;

5.2.3. չներառել այդպիսի իրավունքների օբյեկտները իր անունով գրանցված ապրանքային նշաններում, արտադրական նմուշներում, դոմեյնների անվանումներում:

does not include objects such rights, brand names, industrial design, domain name is registered in the name of the first.

- 6.1. Կողմերը սույնով պարտավորվում են պահպանել մյուս Կողմից կամ նրա անունից գործող երրորդ կողմերից ստացված և սույն Պայմանագրին, Հայտերին, Տեխնիկական առաջադրանքներին, նախագծերին և ծրագրերին, ֆինանսական վիճակին, ձեռնարկատիրական, մարկետինգային և արտադրական գործունեությանը, նոու-հաուսին, գծագրերին, ձևավորումներին և այլ արդյունաբերական սեփականության առարկաներին և Կողմի հաճախորդների տեղեկատվական բազային վերաբերող բոլոր տեղեկություններին գաղտնիությունը, ինչպես նաև սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի ստացած ցանկացած այլ տեղեկատվության գաղտնիությունը (այսուհետ՝ «Գաղտնի տեղեկատվություն»): Կողմերի միջև սույն Պայմանագրի և գործարար համագործակցության գոյությունը նույնպես հանդիսանում է Գաղտնի տեղեկատվություն: Կատարողը երաշխավորում է, որ իր կողմից ներգրավված բոլոր երրորդ անձիք և այլ գործակալները, որոնց պետք է տրամադրվի Գաղտնի տեղեկատվությունը Կատարողի կողմից սույն Պայմանագրի կատարման նպատակով, կկրեն սույն Պայմանագրի 6-րդ գլխով սահմանված գաղտնիության պարտավորությանը հավասարազոր պարտավորություն, իսկ Կատարողը պատասխանատու կլինի այդ պարտավորությունների խախտման համար նույն չափով, որքան եթե խախտումը թույլ տրվեր իր կողմից:
- 6.2. Կողմերը պարտավորվում են չօգտագործել Գաղտնի տեղեկատվությունը սույն Պայմանագրի շրջանակներից դուրս, և չպատճենել, հրապարակել, տրամադրել կամ որևէ կերպ հասանելի դարձնել ցանկացած երրորդ կողմի առանց հակառակ Կողմի գրավոր համաձայնության առկայության (բացառությամբ սույն Պայմանագրի 6.3 կետով ուղղակիորեն նախատեսվող դեպքերի): Ընդ որում, տրամադրման թույլատվությունը չի ենթադրում համապատասխան Գաղտնի տեղեկատվության որևէ սեփականության իրավունքի փոխանցում:
- 6.3. Կողմը իրավունք ունի տրամադրել Գաղտնի Տեղեկատվությունը այն դեպքերում, երբ դա պահանջվում է օրենքով, դատարանի որոշմամբ կամ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այլ պարտադիր կատարման ակտով, որոնք չեն կարող ողջամտորեն օրենքով բողոքարկվել, մյուս Կողմին այդ տրամադրման մասին նախապես գրավոր ծանուցման պայմանով: Պատվիրատուն նաև իրավունք ունի ազատորեն տրամադրելու Գաղտնի տեղեկատվությունը իր խմբի ընկերություններին:
- 6.4. Սույն Պայմանագրի 6-րդ գլխով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում պատասխանատու Կողմը փոխհատուցում է մյուս Կողմին բոլոր փաստաթղթերով հիմնավորված կորուստների դիմաց:

The Parties hereby undertake to maintain the confidentiality of all information related to the terms of this Contract, Orders, Technical Specifications, projects and plans, financial situation, business, marketing and manufacturing activities, know-how, outlines, designs and other objects of industrial property, as well as information concerning the client base of the following Party, received from the opposite Party or third parties acting on its behalf, or any other information acquired by the Parties during the conduct of this Contract (hereinafter referred to as the "Confidential Information"). The existence of this Contract and business cooperation between the Parties will also be considered as Confidential Information. The Executor guarantees that all third parties and other agents involved by him for conduction of this Contract that should be provided with the Confidential Information by the Executor, will bear confidentiality obligations similar to those stipulated under the Section 6 of the present Contract and the Executor will be liable for violation of these obligations to the same extent as if the violation had been committed by him/her.

The Parties undertake not to use Confidential Information outside the scope of this Contract, and not to copy, distribute, provide or make it available to third parties in any other way without the prior written consent of the opposite Party (except in cases expressly provided under the Clause 6.3 herein). Moreover, permission of provision will not imply the transfer of any proprietary rights of the corresponding Confidential Information.

The Party has the right to provide Confidential Information in cases required by Law, by a court decision or other mandatory enforceable act of eligible state or municipal bodies that cannot be reasonably appealed under the law, on the condition of prior notification to the opposite Party. In addition, the Client has the right to freely provide Confidential Information to companies from its own group.

In case of violation of the obligations provided under the Clause 6 of the present Contract, the liable Party will reimburse all justified losses to the other Party.

6.5. Սույն Պայմանագրի 6-րդ գլխով սահմանված Գաղտնի տեղեկատվության դրույթները պարտադիր են Կողմերի համար անժամկետ:

The provisions of the Clause 6 of the present Contract on Confidential Information will be binding for the Parties for indefinite period of time.

7. Կաշառակերության և փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ դրույթ

Anti-bribery and anti-money laundering provision

7.1. Կիրառելի օրենսդրության մասով - Կողմերը երաշխավորում են, որ սույն Պայմանագրի շրջանակներում իրենց կողմից իրականացվող գործունեությունը մշտապես համապատասխանելու է գործող օրենսդրական կարգավորումներին և այլ վարչական պահանջներին (ներառյալ, բայց չսահմանափակելով՝ մաքսանենգ կամ կեղծ ապրանքների, կոռուպցիայի և ահաբեկչության դեմ պայքարի, շահերի բախման, տնտեսական պատժամիջոցների և բոյկոտների արգելման հետ կապված հարցերը կարգավորող օրենսդրություն):

With reference to the Applicable Laws - The Parties hereby warrant that, in all their activity in connection with this Contract, they will at all times comply with all applicable laws, regulations or administrative requirements (including but not limited to the laws regulating issues related to contraband or counterfeit products, corruption, bribery, terrorism, conflicts of interest, economic sanctions and boycott).

7.2. Հակակոռուպցիոն օրենսդրության մասով - Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն տրամադրի որևէ հատկացում, նվեր, կաշառք, զեղչ, վճար, առևտրային կաշառք, ագիտող/հեշտացնող կամ որևէ այլ վճարում՝ դրամական միջոցների, գույքի կամ ծառայությունների ձևով, որն ուղղված կլինի՝

With reference to the Anti-Bribery Laws - The Parties certify and warrant that they will not directly or indirectly make any contribution, gift, bribe, rebate, payoff, influence payment, kickback, facilitation payment or other payment to any person, private or public, whether in money, property or services to.

7.2.1. նպաստավոր վերաբերմունք ստանալուն կամ որևէ պայմանագրի, համաձայնագրի կամ պարտավորության կնքումն ապահովելուն,

obtain favorable treatment or to secure signing of any contracts, agreements or commitments,

7.2.2. արդեն իսկ ստացված նպաստավոր վերաբերմունքի կամ որևէ ապահովված պայմանագրի, համաձայնագրի կամ պարտավորության կնքման դիմաց վճարելուն,

pay for favorable treatment or for any contracts, agreements or commitments secured or,

7.2.3. հատուկ կոնցեսիաներ ստանալուն կամ ստացված հատուկ կոնցեսիաների դիմաց, և կխախտի հակակոռուպցիոն օրենսդրության կամ այլ վարչական պահանջները, որոնք կարող են կիրառելի լինել Կողմերի նկատմամբ:

obtain special concessions or for special concessions already obtained, in each case, in violation of any law, regulation or administrative requirement relating to anti-corruption or anti-bribery that may be applicable to Company.

7.3. Փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրության մասով - Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ իր և իր հետ փոխկապակցված անձանց գործունեությունը համապատասխանում է և մշտապես համապատասխանել է բոլոր գործող օրենսդրական կարգավորումներին և այլ վարչական պահանջներին (ներառյալ ֆինանսական հաշվառման կամ հաշվետվության պահանջները), որոնք ուղղված են փողերի լվացման դեմ պայքարին և որոնք սահմանվել են կամ կիրարկվում են որևէ պետական գործակալության կողմից: Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ իրենց և իրենց հետ փոխկապակցված անձանց դեմ որևէ դատարանում կամ պետական մարմնում կամ արբիտրաժում չի քննվում կամ նախատեսվում որևէ գործ, վարույթ կամ ընթացակարգ՝ կապված վերջինիս կողմից Փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրության խախտման հետ:

With reference to the Anti-Money Laundering Laws - The Parties certify and warrant that their operations and those of their affiliates are and have been conducted at all times in compliance with the anti-money laundering laws of all applicable jurisdictions, the rules and regulations thereunder and any related or similar rules, regulations or guidelines (including any financial recordkeeping or reporting requirements), issued, administered or enforced by any governmental agency. The Parties certify and warrant that no action, suit or proceeding by or before any court or governmental agency, authority or body or any arbitrator involving the Parties or any of their affiliates with respect to the Anti-Money Laundering Laws is pending or threatened

7.4. Կողմերը իրավունք ունեն միակողմանի գրավոր ծանուցմամբ (որն ուժի մեջ է մտնում անմիջապես) լուծել սույն Պայմանագիրը, եթե ողջամտորեն և բարեխղճորեն գտնեն, որ մյուս Կողմը, վերջինիս ներկայացուցիչները (ներառյալ, բայց

The Parties are entitled to terminate this Contract unilaterally by a written notice (which immediately takes effect) should it reasonably and in good faith determine that, the Parties, their affiliates or their respective representatives (including but not limited to directors,

չսահմանափակելով՝ տնօրենները, պաշտոնյաները, գործակալները կամ աշխատակիցները, ինչպես նաև նրա հետ փոխկապակցված անձիք ներգրավված են կամ ներգրավված են եղել որևէ գործընթացի մեջ, որը խախտում է Կիրառելի Օրենսդրությունը, Հակակոռուպցիոն օրենսդրությունը կամ Փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրությունը, կամ կարող է առաջացնել պատասխանատվության ռիսկ Կողմի կամ նրա հետ փոխկապակցված անձի/ընկերության համար՝ Կիրառելի օրենսդրության, Հակակոռուպցիոն օրենսդրության կամ Փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության մասով, Կողմը խախտել է սույն գլխում ներկայացված իր որևէ հավաստիացում և/կամ երաշխավորություն:

officers, agents or employees) as well as persons co-related to them are engaged or have been engaged in a conduct which violates the Applicable Laws, the Anti-Bribery Laws or the Anti-Money Laundering Laws the Parties, their affiliates or their respective representatives (including but not limited to directors, officers, agents or employees) as well as persons co-related to them are engaged or have been engaged in a conduct which may place the other Party or any entity of its' affiliate at risk of liability under the Applicable Laws, the Anti-Bribery Laws or the Anti-Money-Laundering Laws, including by breaching any of the representations or warranties set forth in this Clause. The party has breached any of its assurances and / or guarantees defined in this chapter.

8. Պատասխանատվություն

Liability

- 8.1. Սույն Պայմանագրով սահմանված վճարման ժամկետները խախտելու դեպքում Պատվիրատուն Կատարողի պահանջով վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար Պայմանագրի գնի 0.1 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան Պայմանագրի գնի 10%-ը:
- 8.2. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում Կապալառուն Պատվիրատուի պահանջով վճարում է տույժ՝ Պայմանագրի գնի 0.1 %-ի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար, բայց ոչ ավելի, քան Պայմանագրի գնի 10%-ը:
- 8.3. Տույժերի վճարման պարտավորությունը առաջանում է մյուս Կողմից համապատասխան գրավոր պահանջը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցում կատարելու միջոցով:
- 8.4. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց ստանձնած պարտավորությունները կատարելու կամ խախտումները վերացնելու պարտավորությունից:

In case of violation of the terms of payment specified in this Contract, the Client shall pay a penalty at the request of the Executor in the amount of 0.1% of the Contract Price for each day of delay, but not more than 10% of the Contract Price.

In case of violation of the terms of Services provision specified in this Contract, the Executor shall pay a penalty at the request of the Client in the amount of 0.1% of the Contract Price for each day of delay, but not more than 10% of the Contract Price.

Obligation to pay penalties arises after receiving a written request from the other Party within five working days by making a bank transfer.

Payment of penalties does not release the Parties to fulfill their obligations or to eliminate violations

9. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր)

Force-majeure

- 9.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե նման ոչ պատշաճ կատարումը հանդիսացել է ֆորս մաժորային հանգամանքների հետևանք, որոնք վրա են հասել Կողմերի կամքից անկախ: Ֆորս մաժորային հանգամանքների շարքին են դասվում արտաքին արտակարգ իրադարձությունները, պայմանագրային պարտավորությունների կատարման վրա անմիջապես ազդեցություն ունեցող կարգավորիչ փոփոխությունները, որոնք վրա են հասել անկախ Կողմերի կամքից (հրդեհներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ, համաճարակներ, դժբախտ պատահարներ, պայթյուններ, վթարներ, զանգվածային գործադուլներ, մասսայական անկարգություններ, քաղաքացիական բնակչության հուզումներ, թշնամական ուժերի գործողություններ,

The Parties are exempt of liability for full or partial non-performance of their obligations under the present Contract, if it is a consequence of force majeure that occurred regardless of the will of the Parties. Force majeure circumstances include external emergency situations, regulatory changes that directly affect the performance of contractual obligations, which occurred regardless of the will of the Parties (fires, earthquakes, floods, epidemics, accidents, explosions, accidents, mass strikes, mass disorders, civil unrest, hostile actions, war, as well as resolutions of authorities at all levels, judiciary orders), as well as all other events and circumstances that under the procedure established by Law will be recognized and declared as cases of force majeure.

պատերազմ, ինչպես նաև բոլոր մակարդակների կառավարության մարմիններ որոշումներ, դատական մարմինների կանոնակարգեր), ինչպես նաև մյուս բոլոր իրադարձությունները և հանգամանքները, որոնք օրենքով սահմանված կարգով կճանաչվեն և կհայտարարվեն անհաղթահարելի ուժի դեպքեր:

- 9.2. Յուրաքանչյուր Կողմ պետք է գրավոր կերպով ծանուցի մյուս Կողմին Ֆորս մաժորային հանգամանքների վրա հասնելու և դրանց դադարման մասին՝ վրա հասնելու և համապատասխանաբար դադարման օրվանից սկսած 5 (հինգ) օրվա ընթացքում:
- 9.3. Ֆորս մաժորային հանգամանքների ի հայտ գալու դեպքում պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համաչափորեն:
- 9.4. Եթե Ֆորս մաժորային հանգամանքների հետևանքների գործողությունը շարունակվում է ավելի քան 3 (երեք) ամիս, Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

On the occurrence of force majeure circumstances and their termination, each Party will notify the other Party in a written form within 5 (five) days from the date of their start and termination, respectively.

In case of force majeure circumstances, the deadline for the fulfillment of obligations under this Contract will be prolonged proportionately to the time period during which such circumstances and their consequences act.

If the force majeure consequences last for more than 3 (three) months, then each Party bears the right to terminate the Contract, preliminarily informing the other Party about this in a written form.

10. Եզրափակիչ դրույթներ

Final provisions

- 10.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:
- 10.2. Պայմանագրում սահմանված գրավոր հաղորդակցությունը կարող է իրականացվել Կողմերի միջև էլեկտրոնային նամակի միջոցով: Կողմերը պարտավոր են բոլոր էլեկտրոնային նամակները ուղարկել մյուս Կողմի հետևյալ ներկայացուցիչների էլեկտրոնային հասցեին.
Պատվիրատուի ներկայացուցիչ՝
anastasia.serova@maisonmarom.com
Կատարողի ներկայացուցիչներ՝
evnmag@gmail.com
- 10.3. Սույն Պայմանագիրը, ինչպես նաև նրանում բոլոր չհամաձայնեցված հարցերը, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 10.4. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, Պայմանագրի մեջ փոփոխությունները կատարվում են Պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագրերի տեսքով:
- 10.5. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ՝ դատական կարգով:
- 10.6. Սույն Պայմանագիրը կազմված է երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, հայերեն և անգլերեն, որոնց միջև տարբերությունների դեպքում հայերենը գերակայում է: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

This Contract shall enter into force upon bilateral signing and shall be in force until the full and proper fulfillment of the obligations of the Parties.

The written communication defined in the contract between the Parties may be made by E-mail. The Parties shall send all e-mails to the following representatives of the other Party:

Client's representatives:
anastasia.serova@maisonmarom.com

Executor's representatives:
evnmag@gmail.com

This Contract, as well as all the issues not agreed in it, shall be regulated in accordance with the procedure established by the legislation of the Republic of Armenia.

By mutual agreement of the Parties, the amendments to the Contract shall be made in the form of additional agreements under the Contract.

All the disputes arising from the present Contract will be settled in courts of the RA, according to the Armenian legislation.

The present Contract is concluded in two copies, having equal legal force, in Armenian and English, in case of discrepancy, Armenian shall prevail. Each Party shall be provided with one copy of the Contract.

11.

**Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները/
Parties requisites and signatures**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ / CLIENT

«Մեզոն Մարոմ» ՍՊԸ

“Maison Marom” LLC

Հասցե՝ ՀՀ, Բ. Երևան, 0002, Կենտրոն, Պուշկինի վտղ. Ե. 35 տարածք 10

Address: 35 Pushkin str. space 10, Center, Yerevan, 0002, RA

ՀՎՀՀ/TIN: 02909409

ԿԱՏԱՐՈՂ / EXECUTOR

“Qaghaki Amsagir” LLC

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Երևան, Պ. Սեվակի 8, 34

address: No.34 Paruyr Sevaki 8, Yerevan, RA

ՀՎՀՀ/TIN: 00163034

բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

bank: «Ameriabank» CJSC

h/h / a/c: 25485330100

Իգոր Սերիկով

Igor Serikov

Տնօրենի տեղակալ

Deputy Director

Artavazd Yeghiazaryan

Արտավազդ Եղիազարյան

Տնօրեն

Director